## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

---

### ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 04.10.2013թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Փաստաբանության մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր) հակասում են փաստաբանության շահերին,

հաշվի առնելով նաև ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ նաև՝ Պալատ) ձեռնարկվելիք միջոցառումների կազմակերպման և Նախագծերի դեմ Պալատի գործողությունների ռազմավարության մշակման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

*- Ստեղծել հասարակական հիմունքներով գործող ժամանակավոր աշխատանքային խումբ:*

*- Աշխատանքային խմբի անդամներ նշանակել հետևյալ փաստաբաններին՝*

1. *Արա Զոհրաբյան,*
2. *Կարեն Մեժլումյան,*
3. *Մելանյա Առուստամյան,*
4. *Արմեն Տեր-Տաճատյան,*
5. *Լեոնիդ Հովհաննիսյան,*
6. *Նիկոլայ Հակոբյան,*
7. *Իրինա Փիլոյան:*

*- Որպես աշխատանքային խմբի հիմնական գործառույթ սահմանել 04.10.2013թ. «Փաստաբանության մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ*

*կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեմ պայքարի համար Պալատի ռազմավարության մշակումը, անհրաժեշտ քննարկումների և այլ միջոցառումների կազմակերպումը:*

*- Սահմանել, որ Աշխատանքային խմբի լիազորությունները գործում են մինչև Նախագծերը շրջանառությունից դուրս հանելու պահը:*

*- Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին սույն որոշման մասին իրազեկել աշխատանքային խմբի անդամներին:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**11 հոկտեմբեր 2013թ.**
**թիվ 7-Ա**
**Երևան**